սպասաւորես, որպէս թագաւորք և իշխանքն, եւս առաւել քահանայքն և վարդապետքն, եւս առաւել առաջնորդքն. որ նոցա զօրհնութիւնն առնուս և աղօթից նոցա շահիս և օգտիս, տրօք և հարկիք առնելով։ Նոյնպէս մարդ կայ որ իւր վաստակէն այլոց տայ և հարկիք անէ, որպէս հողագործքն, ի վաստակոց իւրեանց հարկս տան թագաւորաց և իշխանաց. սոյնպէս վաճառականքն ի շահուց իւրեանց տասանորդ տան թագաւորաց. քանզի նոքա պատերազմին հետ թշնամեաց վասն մեր, և վաճառականքն խաղաղութեամբ գնան ի ճանապարհս իւրեանց. սոյնպէս և արուեստաւորքն արուեստից, պարտ է ա֊րուեստից իւրեանց հարկս տալ թագաւորացն. զի նոքա երթեալ պատերազմեցան ընդ թշնամեաց վասն նոցա, և նոքա խաղաղու֊թեամբ գործեցեն զարուեստս իւրեանց։ Նոյնպէս և աշխարհականքն. պարտ է տիրել (կամ սիրել) զքահանայսն և կերակրիլն. զի նոքա աղօթեն վասն մեր՝ անքուն կենալով, և զԱստուած ընդ մեզ կու հաշտեցընեն։ Նոյնպէս և ունեւորք՝ պարտ է զաղքատսն գարմանել և կերակրել և զգեցուցանել. զի դու որքանի զաղքատսն գարմանես և բաշխես վասն Աստուծոյ, և Աստուած քեզ փոխան աւելի տայ. եւս առաւել այն կեանքն՝ զերկնից արքայութիւն պարգեւէ, և բանդ աչող գայ. և թէ չունիս ոսկի և սպիտակ, լեզուով և հարկելով և ջուր տալով և զհիւանդսն դար֊մանելով, և զբանտեալսն ի տես երթալով, Աստուած այն քեզ աղօրմութիւն կու հա֊մարի. զի Աստուած զկարն կու խնդրէ մար֊դոյս »։

Յառաջաբանէս վերջ կու սկսի 43 տեսակ թռչունները ստորագրել, մեծերէն կամ զօ֊բաւորներէն սկսեալ, և են, ըստ իրեն շա֊բածին։

ա. Սօնկուր.
բ. Պազա (Բազէ).
գ. Պալապան.
դ. Շահին.
ե. Ալթմաճա (Որի).
զ. Ղարայ ղուշ, Տալշանճիլ.
է. Զայլաք, Ճայլկ.
ը. Պապայ ղուշի.
թ. Ղարակօզ, Ալթմաճայի նման.
ժ. Մաշկաթեւ, Թ. Եարայսայ.
ժա. Բազ.
ժբ. Պեղպեղ, Թուռթի (Թուռթակ).
ժգ. Պըլպուլ.
ժդ. Պայըր գուշի (Արտոյտ).
ժե. Պօղմաքլի պագալ.
ժզ. Ղարայ թաւուք (Սարեակ).
ժէ. Թույղար.
ժը. Սըղըրմըգ (Տարմահաւ).
ժթ. Ղումրի (Տատրակ).
ի. Սաքայ.
իա. Ֆիլորեայ.
իբ. Իսփինոս.
իգ. Իսքէթի.
իդ. Պայղուշ (Բու).
իե. Իպիքլի.
իզ. Թույր? (կարապ).
իէ. Տեւէնկէչ.
իը. Ազաւնի.
իթ. Ծիծառն.
լ. Թուռաճ (Տուրէճ).
լա. Պիթնուս.
լբ. Հաւ.
լգ. Քարթալ (Արծիւ).
լդ. Ագռաւ.
լե. Ղուզղուն (Ագռաւ մեծ).
լզ. Սիրամարգ.
լէ. Ճնճուղ.
լը. Արծիւ. Դաւշանճիլ.
լթ. Ղումրի.
խ. Կռունկ.
խա. Ճալամ (Ջայլամն).
խբ. Ցոպոպ.
խգ. Սիմուրգ։

Թռչնոց մէջ առաջին յիշուածն՝ իբրեւ անունց ցեղին առիւծն ըլլար, Առիւծուր կամ Սօնղուր մեծագոյն գիշատիչ բազայ է, ինչպէս համարի և մեր մէկ թռչնաբան Յովհաննէս վարդապետ մի.

« Սունղուր բազէն երբ բարձրանայր
Իր շուքն ի ջուրըն երեւայր.
Գիտէր՝ թէ հաւ էր կըռիւ տայր,
Ինչուր, խեղդէր ի ջուրն ի վայր »։